

ՆԱԿԱԿԱՍԱՐԴ

ԱԶԳԱԿ

ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ա. ՏԱՐԻ

Թի 1

ՕԳՈՍՏՈՍ 2002

ԱՌԱՋԻՆ ԽՕՍՔԸ

Հետզհետե՛ս պարզացող եւ երկրագունդը կլանող մարպաշխարհին հետ քայլ պահելու առաջադրանքով, «Ալդակ» այսուհետեւ ամսական հերթականութեամբ լոյս պիտի ընծայէ մարպական յաւելումներ՝ «Նաւասարդ»: Օրաթերթի մարպական ընթացիկ էջին զուգահեռ, այս յաւելումը իրաքանչիւր ամսուան առաջին Չորեքշաբթին հրապարակելով՝ պիտի փորձենք գէթ մասամբ մեղմացնել մեր ընթերցողներուն մարպական հետաքրքրութիւններուն պապակը՝ տեղական, միջազգային թէ հայրենի այլապս լուրերով ակնարկներով:

Ինչո՞ւ «Նաւասարդ»: Որովհետեւ անունը լաւագոյնս կը յուշէ մարպաշխարհին մէջ մեր ժողովուրդին շատ հինէն եկող սերն ու ներդրումը, միաժամանակ ան հարապատ մեկնութիւնն է, ձեռով մը հոմանիշը՝ հայկական մարպաշխարհին:

Պիտի յաջողի՞նք մեր առաքելութեան մէջ: Պատասխանը պիտի տայ ընթերցողը, յատկապէս մարպասէր ընթերցողը:

Յամենայնդէպս, մէկ բան յստակ է ու մեկին, որ մարպական այս յաւելումին խմբագրութիւնը որոշած է բծախրնդիր ու լուրջ աշխատանքով գործի լծուիլ եւ տեւաբար ընթերցողներուն ներկայանալ յարանորոգ թափով ու վճռականութեամբ:

ՊԱՍՔԵԹՊՈԼ. ԱՇԽԱՐՀԻ 14ՐԴ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ (2002)

ԼԻԲԱՆԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՆՔԱՄ ԸԼԼԱԼՈՎ՝ ՆԵՐԿԱՅ



29 Օգոստոսին 8 Մեպտեմբերին, Միացեալ Նահանգներու Ինտիանափոլիս քաղաքին մէջ տեղի ունենալիք պասքեթպոլի աշխարհի ախոյեանութեան մրցաշարքին իր մասնակցութիւնը առաջին անգամ ըլլալով պիտի բերէ նաեւ Լիբանան, որ մրցաշարքին մասնակցելու իրաւունքը ստացաւ հանդիսանալով Ասիոյ ցամաքամասի փոխ ախոյեան (ախոյեան՝ Չինաստան):

Լիբանանի պասքեթպոլի տղոց խումբին իրագործումը նկատուեցաւ պատահական, նկատի ունենալով անոր փոքր երկիր ըլլալը (բաղդատած մրցաշարքին մասնակցող հսկաներուն): Հակառակ պասքեթպոլի միջազգային մրցաշարքերէն անցեալի

իր բացակայութեան եւ անփորձութեան, Լիբանան կարճ ժամանակամիջոցի մէջ յաջողեցաւ «ցատկել» դէպի արհեստավարժութիւն:

Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը պիտի բերեն 16 խումբեր, բաժնուած՝ 4 խմբակներուն: Խմբակներու առաջին երեք դիրքերը գրաւող խումբերը պիտի անցնին Բ. հանգրուան, իսկ չորս դուրս մնացող խումբերը իրարու դէմ պիտի մրցին 13 - 16րդ դիրքերուն համար:

Լիբանան կը գտնուի Բ. խմբակին մէջ, որուն անդամ են նաեւ Պրագիլ, Թուրքիա եւ Փորթո Ռիքո: Ան իր առաջին մրցումը պիտի կատարէ



մրցաշարքի բացումին օրը՝ 29 Օգոստոսին, մրցելով Պրագիլի հօր հաւաքականին դէմ:

Լիբանան նկատի առնուած է մրցաշարքին մասնակցող խումբերու Դ. դասակարգին մէջ (իմա՝ մրցաշարքի ամենէն տկար խումբերէն): Ալճերիոյ հետ ան (Դ. դասակարգ) պիտի ըլլայ արաբական աշխարհի երկու ներկայացուցիչներէն մէկը այս մրցաշարքին:

Խմբակներուն վիճակաճգութիւնը կը պարզէ հետեւեալ պատկերը:

- Ա. ԽՄԲԱԿ
Եուկոսլաւիա
Սլոակիա
Քանադա
Անկոլա

- Բ. ԽՄԲԱԿ
Պրագիլ
Թուրքիա

ՄԻՔԱՅԵԼ ՇՈՒՄԱԽԵՐ՝ ՖՈՐՄԻԼԱ ԻՒ ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԵԾԱԳՈՅՆ ԴԵՄՔԵՐԷՆ ՄԵԿԸ, ԴԱՐՉԵԱԼ ՀԱՆԴԻՍԱՑԱԲ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆ

Վերջին շրջանին Ֆորմիլա Լի սիրահարներուն թիւը յստակօրէն աւելցաւ, նկատի ունենալով, որ մօտ կէս դար առաջ հաստատուած անմոռանալի մրցանիշ մը սկսաւ «վտանգուիլ»: Մօտաւորապէս 50 տարիներ առաջ, Ֆորմիլա Լի պատմական հերոսը՝ արժանիքի խոլան Մանուէլ Ֆանճիօ փաստեց իր գերակայութիւնը այս մարզին մէջ, երբ 5 ախոյեանութիւններու տիրանալով (1951 եւ 1954 - 1957) իր անունը արձանագրեց Ֆորմիլա Լի պատմութեան մէջ: Ֆանճիոյն վերջ եկան այլ հսկաներ ալ, ինչպէս՝ Ճէքի Սթիւարթ,



Յանճիոյն վերջ եկան այլ հսկաներ ալ, ինչպէս՝ Ճէքի Սթիւարթ,

ملحق أزيك

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՎԵՐՍԿՍԻՆ ՆՈՐ ԹԱՓՈՎ

Եւրոպական երկիրներու ֆուտպոլի հինգ կարեւորագոյն ախոյեանութիւններէն (Իտալիա, Գերմանիա, Ֆրանսա, Անգլիա եւ Սպանիա) առաջինը սկսաւ Ֆրանսայի մէջ եւ արդէն տեղի ունեցան Ա. հանգրուանի մրցումները, որոնց ընթացքին նշանակուեցան 24 կոլ, իսկ իրաւարարները հինգ անգամ գործածեցին կարմիր քարտը:

Բացման մրցումը տեղի ունեցաւ ախոյեան Լիոնի եւ Կէնկանի միջեւ, որուն ընթացքին նշանակուեցան ամէնէն ակելի կոլերը (3 3):

2002 2003 եղանակին հետաքրքրական եղաւ Աժաքսիօ ակումբին (Քորսիքա) ներկայութիւնը Ա. դասակարգի խումբերուն մէջ, նկատի ունենալով, որ անիկա 29 տարիէ ի վեր մաս կը կազմէր վարի դասակարգերուն:

Ախոյեանութեան առաջին կոլը յաջողեցաւ նշանակել Լիոնի պրագիլցի միջնապահ Ժոնինիօ, 3րդ վայրկեանին՝ Կէնկանի բերդէն ներս:

Ֆրանսայի ամէնէն մեծ ժողովրդականութիւն վայելող խումբը՝ Մարսէյ, պարտութեամբ սկսաւ եղանակը, երբ Լիոնի դաշտին վրայ 2 0 արդիւնքով պարտութիւն մը կրեց Նանթին: Սկզբունքով, անիկա իր մրցումը պիտի կատարէր իր դաշտին՝ «Վելոտրոմ»ի մէջ սակայն անցեալ եղանակին իր կատարած վերջին մրցումին անոր անկարգապահ համակիրները (Փարիզ Սէն Ժերմէնի դէմ) պատճառ դարձան, որ ան մէկ մրցումով կախակայուի յաջորդ եղանակին համար:

Ֆրանսայի ֆուտպոլի ֆետերասիոնը ՖԻՖԱին անդամակցած է 1904ին: Անոր ներկայ նախագահն է՝ Քլօտ Սիմոնէ: Ֆետերասիոնին հասցէն է՝ 60 bis, avenue d'Iena-75783 Paris, Cedex 16: Համացանցի անոր կայքի հասցէն է՝ www.fff.fr: Երկրին բնակչութիւնը կը հաշուէ 60 միլիոն:

ԱՆԳԼԻԱ

Անգլիոյ ֆուտպոլի բարձրագոյն դասակարգի ախոյեանութեան **2002 2003** եղանակը, որ կը սկսի 0գոստոս 17ին, պիտի ըլլայ իր կարգին բաւական հետաքրքրական, մանաւանդ որ Մանչեսթըր քաղաքի երկու կազմերը՝ Սիթի եւ Շուսթըր ղարձեալ ներկայ պիտի ըլլան: Սիթի, որ անցեալ եղանակին հանդիսացած էր Ա. դասակարգի ախոյեան, իր ամէն կարելին պիտի ընէ դարձեալ մարզիչ Ալեքս Ֆերկլըսընի տիւնամիք կազմին շուքէն դուրս գալու. բան մը, որ միշտ ալ դժուար իրագործելի եղած է անոր համար:

Տիտղոսին գլխաւոր թեկնածուները այս եղանակին եւս պիտի ըլլան Արսենալ, Մանչեսթըր Շուսթըր եւ Լիվըրպոլ, եթէ անշուշտ չըլլան անակնկալ աուքսայտըրներ:

Բաղդատամբ այլ ախոյեանութիւններու, անգլիական խումբերուն յայտագիրը կ'ըլլայ շատ ակելի խճողուած:

Անգլիոյ ֆուտպոլի ֆետերասիոնը ՖԻՖԱին անդամակցած է 1905ին: Անոր նախագահն է՝

Ճեֆրի Թոմսըն: Ֆետերասիոնին հասցէն է. 25 Soho Square – London W1D 4FA, իսկ համացանցի անոր կայքի հասցէն է. www.the-fa.org: Երկիրը կը հաշուէ 46 միլիոն բնակչութիւն:

ՍՊԱՆԻԱ

Սպանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան առաջին հանգրուանի մրցումները կը սկսին 0գոստոս ամսուան վերջին օրը, մասնակցութեամբ 20 խումբերու:

Տիտղոսին համար պայքարող երկու խումբերը միշտ ալ կ'ըլլան Ռէալ Մատրիտ եւ Պարսելոնա, թէեւ այս վերջինը վերջին երկու տարիներուն կը մնայ մայրաքաղաքի կազմին շուքէն տակ:

Պարսա այս եղանակին շատ հաւանաբար շատ ակելի նեղ կացութեան մատնուի, որովհետեւ խումբին տիւնամոնց եւ սիրտը՝ պրագիլցի Ռիվալտոն փոխանցուած է Ա. Սէ. Միլան, յայտնապէս անցեալի իր հարցերը «չնորոգելու» համար նախկին մարզիչ հոլանտացի Լուիս Վան Կաալի հետ, որ վերստանձնեց խումբին մարզիչի պաշտօնը:

Ինչպէս նախորդ եղանակներուն, այս տարի եւս կը կարծուի, որ վերոնշեալ երկու կազմերէն բացի, այլ խումբեր եւս, որոնց կարգին՝ Տեփոթիլօ Քորուսա, Վալենսիա (անցեալ եղանակի ախոյեան), Սելթա Վիկո եւ Ռէալ Պեթիս գրաւեն լուսարձակները:

Սպանիոյ ֆուտպոլի ֆետերասիոնը ՖԻՖԱին անդամակցած է 1904ին. Անոր նախագահն է՝ Անիէլ Մարիա Վիլար Լոնա:

Ֆետերասիոնին հասցէն է. Calle Alberto Bosch, 13-Apartado postal 347-E-28014 Madrid: Համացանցի անոր կայքի հասցէն է. www.futvol.com: Երկրին բնակչութիւնը կը հաշուէ 40 միլիոն:

ՊՈՐՏՐԱԿԱ

Գերմանիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Պուկտսլիկա) **2002 2003** եղանակը կը սկսի այս շաբաթավերջին, երբ Ա. հանգրուանի մրցումներուն մեծամասնութիւնը տեղի ունենայ Շաբաթ, 9 0գոստոսին:

Եղանակի բացման մրցումը տեղի կ'ունենայ Ուրբաթ, 8 0գոստոսին. Անցեալ եղանակի ախոյեան Պորուսիա Տորթմունտ իր դաշտին վրայ կը հիւրընկալէ Հերթա Պերլինը, որ անցեալ տարի ախոյեանութեան մրցումները աւարտած էր 4րդ դիրքը գրաւելով:

Հինգ գլխաւոր երկիրներու ֆուտպոլի ախոյեանութեան մրցումներուն մէջ, Պուկտսլիկան միակն է, որ ունի ձմեռնային իր արձակուրդը: Անիկա իր արձակուրդին կը սկսի Դեկտեմբերի կիսուն: Ախոյեանութեան մրցումները կը վերսկսին Փետրուարին:

Շատերու կարծիքով, այս է գլխաւոր պատճառը, որ Գերմանիոյ ֆուտպոլի ազգային խումբը վերջին տարիներուն շատ ակելի լաւ արդիւնք կ'արձանագրէ:

Այս տարի եւս տիտղոսին գլխաւոր թեկնածուներն են Տորթմունտ, Պայէրն Միլենիս եւ

Պայէր Լեւերքուզըն: Վերջին տարիներուն բացի այս երեքէն այդքան ալ զօրաւոր խումբեր չկան՝ ախոյեանութեան տիտղոսին համար պայքար կարենալ մղելու:

Գերմանիոյ ֆուտպոլի ֆետերասիոնը ՖԻՖԱին անդամակցած է 1904ին, ապա՝ 1950ին: Անոր նախագահն է՝ Կերհարտ Մայր-Վոլֆելտը: Ֆետերասիոնին հասցէն է. Deutscher Fussball – Bund – P. O. Box 71 02 65-D-60492 Frankfurt am Main: Համացանցի անոր կայքի հասցէն է. www.dfb.de: Երկիրը կը հաշուէ 82 միլիոն բնակչութիւն:

ՔՐՈՅԻՍ

Հակառակ անոր որ Իտալիոյ ֆուտպոլի ախոյեանութեան (Քալչիօ) **2002 2003** եղանակը կը սկսի Սեպտեմբեր 1ին, սակայն մրցումներուն թուականներուն գծով ցարդ կը տիրէ անորոշ վիճակ, նկատի ունենալով որ տակաւին ակումբները ուղղակիօրէն պատկերասփռուող կայաններուն հետ չեն կրցած համաձայնիլ:

Իտալիոյ ախոյեան Եուվենթուս եղանակի իր առաջին մրցումը կը կատարէ Փիաչենցայի դէմ, այս վերջինին դաշտին վրայ: Նոր Ա. դասակարգ բարձրացած Քոմօ իր կատարելիք առաջին մրցումին ունի բաւական դժուար ճակատում մը, երբ այցելէ Ա. էս. Ռոմայի դաշտը:

Ինթէր Միլան, որ 1989էն ի վեր չէ կրցած տիտղոսի մը տիրանալ, իր առաջին մրցումին «Սան Սիրօ»ի մէջ պիտի հիւրընկալէ Ա. դասակարգ բարձրացած այլ խումբ մը՝ էմփոլին:

Եղանակի առաջին զօրաւոր ճակատումը տեղի պիտի ունենայ 4րդ հանգրուանին (29 Սեպտեմբեր), երբ Լացիօ Ռոմա ճակատի Ա. Սէ. Միլանի դէմ:

20 Հոկտեմբերին, Ինթէր Միլան պիտի հիւրընկալէ Եուվենթուսը, իսկ շաբաթ մը ետք տեղի պիտի ունենայ Հոմօ քաղաքի տերպին՝ Լացիօյի եւ Ռոմայի միջեւ:

Միլանօ քաղաքի տերպին տեղի պիտի ունենայ 24 Նոյեմբերին, երբ Ինթէր պիտի ճակատի Ա. Սէ. Միլանի դաշտին վրայ: Բացի զայս ակումբներու միջեւ ճակատումէն, իրարու դէմ պիտի ճակատին նաեւ պրագիլցի երկու աստղեր՝ Ռոնալտօ եւ Ռիվալտօ, որոնք միասնաբար բարձրացուցած էին Մոնտիալի բաժակը, Պրագիլի ֆուտպոլի ազգային խումբին տարազով:

Իտալիոյ ֆուտպոլի ֆետերասիոնը ՖԻՖԱին անդամակցած է 1905ին: Անոր նախագահն է Ֆրանքօ Քարրարօ: Ֆետերասիոնին հասցէն է. Gioco Calcio – Via Gregorio Allegri, 14 – Casella Postale 2450 – 00198 Roma: Համացանցին վրայ անոր կայքի հասցէն է. www.figc.it: Իտալիոյ բնակչութիւնը կը հաշուէ 57,5 միլիոն:

ԼԻԲԱՆԱՆ ԱՌԱՋԻՆ...

Շարունակուած՝ Ա. Էջեց

- Փորթո Ռիքո
- ԼԻԲԱՆԱՆ
- Գ. ԽՍՐԱԿ
- Մ. Նահանգներ
- Գերմանիա
- Զինաստան
- Ալենրիա
- Գ. ԽՍՐԱԿ
- Արժանթին
- Ռուսիա
- Նոր Զելանդիա
- Վենեսուելա

ՄՐՅԱՇԱՐՔԻՆ գլխավոր թեկնածուները կը նկատուին կազմակերպիչ երկիրը՝ Մ. Նահանգներ, նախապէս երեք անգամ շահած է աշխարհի ախոյեանութիւնը՝ (1954ին, 1986ին եւ 1994ին), տիտղոսակիր եուկոսուաիա (4 անգամ՝ 1970ին, 1978ին, 1990ին եւ 1998ին) եւ Պրագիլ (2 անգամ՝ 1958ին եւ 1963ին):

Մրցաշարքին ամերիկեան ցամաքամասը կը մասնակցի 6 խումբերով, Եւրոպա՝ 5, Ասիա՝ 2, Ափրիկէ՝ 2 եւ Ովկիանիա՝ 1:

ՊԱՍԵԹՊՈԼ

ԱՍԻՈՅ ՓՈԽ ԱԽՈՅԵԱՆ ԼԻԲԱՆԱՆ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ

Լիբանանի պասթեթպոլի ազգային խումբը պասթեթպոլի աշխարհի ախոյեանութեան մասնակցելու իր տոմար ապահովեց 20 - 28 Յուլիս 2001ին, Շանկհայի մէջ տեղի ունեցած Ասիոյ ախոյեանութեան մրցումներուն 2րդ դիրքը գրաւելէ ետք:

Ա. հանգրուանի մրցումներուն Լիբանան պարտութեան մատնեց Արաբական Միացեալ Էմիրութիւնները (70 - 69) եւ Սինկափուրը (90 - 56), իսկ պարտուեցաւ Հարաւային Քորէայէն (97 - 71):

Բ. հանգրուանի մրցումներուն, Լիբանան յաղթեց Թայլանդին (87 - 72) եւ Ճափոնին (83 - 73), իսկ պարտուեցաւ հիւրընկալ Չինաստանէն (87 - 76): Նշենք նաեւ, որ Չինաստանի դէմ իր կատարած

մրցումին, Լիբանանի հաւաքականի մարզիկները խոշտանգուեցան չինացի մարզիկներուն եւ պատասխանատուներուն կողմէ:

Կիսաւարտականին, Լիբանանի կազմը դարձեալ դէմ յանդիման եկաւ Քորէայի հաւաքականին, որմէ առաջին հանգրուանին պարտուած էր, եւ այս անգամ յաջողեցաւ մեծ իրագործումով մը պարտութեան մատնել զայն՝ 75 - 72 արդիւնքով:

Աւարտական մրցումին Լիբանան դարձեալ ճակատեցաւ հիւրընկալ Չինաստանի դէմ, որմէ պարտուեցաւ 97 - 63 արդիւնքով եւ հանդիսացաւ Ասիոյ փոխ ախոյեան: 29 Օգոստոսէն 8 Սեպտեմբեր ինտիանափոլիսի մէջ (Միացեալ Նահանգներ) տեղի ունենալիք աշխարհի

ախոյեանութեան, իրենց մասնակցութիւնը բերող Լիբանանի հաւաքականի անդամներն են՝

Ուալիտ Տամիաթի (Ռիատի), Ռոնի Ֆահրտ (Պլու Սթարթ), Ժորժ Շիպանի (Սատաքա), Պատրիկ Մաքքե (Սատեա), Ղազի Պուսթանի (Շանվիլ), Շարլ Պարտաուիլ (Ռիատի), Էլի Մշանթաֆ (Խմբ., Սատեա), Ֆատի Խաթիպ (Սատեա), Ռիչըրտ Հալլիթ (Սատաքա), Եասեր Ալ Հաթ (Ռիատի), Մուսա Մուսա (Շանվիլ), Ժոզէֆ Վոկըլ (Շանվիլ), Փօլ Խուրի (Ռիատի), Ռոյ Սըմահա (Սատեա):

2002ի պասթեթպոլի աշխարհի ախոյեանութեան մասնակցող Լիբանանի կազմին միջին տարիքը 30 է, իսկ միջին հասակը՝ 193,5սմ.:

Ո՞Վ Է ՃՈՆ ՆԻՈՒՄԸՆ

Լիբանանի պասթեթպոլի տղոց հաւաքականի մարզիչը՝ Ճոն Նիումըն պասթեթի իր ասպարէզը սկսած է իբրեւ մարզիկ, 1969ին. մասնակցելով ամերիկեան էյ. Պի. էյ.ի մրցաշարքին, ապա կարճ ժամանակի համար փոխադրուած է էյ. Պի. էյ., մինչեւ 1978: 1979ին ան մաս կազմած է Իտալիոյ Կապիթի Քանթա խումբին, որուն հետ շահած է Եւրոպայի ախոյեանութիւնը եւ ընտրուած է Եւրոպայի մրցաշարքին լաւագոյն մարզիկ (էմ. Վի. Փի.). որմէ ետք տարեշրջան մը մաս կազմած է Գերմանիոյ Սաթիւրն Քոլոնիին, անոր հետ շահելով Գերմանիոյ պասթեթպոլի ախոյեանութիւնը եւ բաժակը: Նոյն տարին ան ընտրուած է Գերմանիոյ պասթեթպոլի լաւագոյն «օտար» մարզիկը: 1981ին սկսած է Ճոն Նիումընի մարզիչի ասպարէզը, ամերիկեան երկրորդական խումբերու հետ, մինչեւ 1986. երբ ան կը փոխադրուի Եւրոպա եւ յաջորդաբար կը մարզէ Պիմեթ (Պելմիքա), Փառք Փակրաթի, Հիրթիլեա (Յունաստան), Փեգոփորիքոս, Ափոեյ (Կիպրոս) եւ վերջապէս 2000ին կը փոխադրուի Քուէյթ մարզելու Քազմա Սփորթ Քլապը:

Իր մարզած բոլոր խումբերուն հետ, Նիումըն շահած է միջազգային մրցաշարքեր եւ տեղական ախոյեանութիւններ, միշտ ալ ընտրուելով տարուան լաւագոյն մարզիչը:

2001ին ան կը նշանակուի Լիբանանի ազգային խումբի մարզիչ եւ Լիբանանի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով զայն կը հասցնէ պասթեթպոլի աշխարհի ախոյեանութեան:

ՇԱՍԱՅԱՆՑ

ՖՈՒԹՊՈԼԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ «ՅԱՌԱՋԱՊԱՀ» ԿԱՅՔԵՐ

Ճափոնի եւ Հարաւային Քորէայի հիւրընկալած 2002ի Մոնտիալը համացանցի պատմութեան գլխավոր իրադարձութիւններէն մէկը հանդիսացաւ: Վիճակագրական կարգ մը տուեալներու համաձայն, այդ օրերուն լրատուական կայքեր «այցելողներուն» թիւը գերազանցեց Սեպտեմբեր 11ի ահաբեկչական արարքին յաջորդող օրերուն համացանցէն վայրկեանը վայրկեանին լուրերու հետեւողներուն թիւը: Սակայն Մոնտիալի աւարտով ֆութպոլի աշխարհին հայելին հանդիսացող կայքերը քիչ բան կորսնցուցին իրենց փայլքէն եւ շահեկանութենէն:

Եւրոպական ֆութպոլի եղանակի նախօրեակին, կ'արժէ արագ անդրադարձ մը կատարել ֆութպոլի նուիրուած ամէնէն հետաքրքրական կայքերուն:

● www.football365.com հասցէով կայքը վերջին տարիներուն ֆութպոլի համակիրներուն մօտ ամէնէն աւելի ժողովրդականութիւն վայելող կայքը կը հանդիսանայ:

Լրատուութիւններով, վերլուծականներով, հարցազրոյցներով եւ... «բամբասանքներով» հարուստ յատկանշական կայք մըն է «ֆութպոլ 365»ը:


● www.icons.com կայքը առանձնաշատուկ տեղ կը գրաւէ մարզական կայքերու անդաստանին մէջ: Այստեղ շարք մը ծանօթ ֆութպոլիստներ շաբաթական դրութեամբ կը ներկայացնեն իրենց օրագրութիւնները եւ տպաւորութիւնները:

● www.football.guardian.co.uk - Բրիտանական «Տը Կարտիըն» թերթին պաշտօնական կայքին ֆութպոլի յատկացուած բաժինը՝ մասնագէտներու կարծիքով լաւագոյնն է իր բովանդակութեամբ եւ, համապարփակութեամբ եւ գրաւչութեամբ:

● www.bbc.co.uk/football - «Պի.Պի. Սի.» լրատուական գործակալութեան կայքին ֆութպոլի բաժինը կը յատկանշուի նիւթերու լաւ ներկայացումով:

Ֆութպոլի լաւագոյն կայքերու շարքին, կարելի է նշել նաեւ հետեւեալները

- www.espnoccernet.com
- www.uefa.com (Եւրոպական ֆութպոլի ֆետերասիոնին կայքը)
- www.the-fa.org
- www.planetfootball.co.uk



ԱՊԱԳԱՆ ՓԱՅԼՈՒՆ Է Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀԱՄԱՐ

Կ'ԸՍԷ ՎԱՉԷ ՍԱՐԳԻՍԵԱՆ



«Ն ա ի ա - սարդ»ի մեր առաջին թիով կը ներկայացրնենք շահեկան հարցազրույց մը՝ Հ.Մ.՝

(Centre de formation) աշխատանքներուն եւ ծրագիրին մասին մօտէն ծանօթանալու համար դիմեցինք Վաչէ Սարգիսեանին, որ հանգամանօրէն պատասխանեց մեր հարցումներուն, լոյս սփռելով այդ մեծ գործունէութեան վրայ:



Հ.Մ.ի ֆութպոլի նորաստեղծ դպրոցի գլխաւոր մարզիչ Վաչէ Սարգիսեանի հետ:

Վաչէ Սարգիսեան ծանօթ անուն է Լիբանանի ֆութպոլի շրջանակներուն մէջ: Ան եղած է փայլուն ֆութպոլիստ, ինչպէս նաեւ յարգուած՝ բոլորին կողմէ: Սարգիսեան իբրեւ մարզիչ վկայուած է Պրագիլէն եւ այս մարզին մէջ եւս նոյնքան հմուտ է՝ որքան իբրեւ խաղացող, սակայն բախտը ունեցած չէ ապացուցելու մարզիչի իր կարողութիւնները: Կը մաղթենք, որ անոր առաջին մեծ իրագործումը ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ, իր նոր առաքելութեան ընթացքին: Իր օգնական մարզիչներով եւ պատասխանատուներով ան ձեռնարկած է դժուար, բայց նաեւ՝ շատ օգտակար եւ երախտաշատ առաքելութեան մը ձեռնարկած է, որուն արդիւնքը կարելի է քաղել միայն տարիներ ետք, երբ սերունդ մը ամբողջ հասած կ'ըլլայ եւ կը ստանձնէ Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբին ամբողջ պատասխանատուութիւնը:

Օգտաշատ եւ ողջունելի այս դպրոցին

ՀԱՐՑՈՒՄ.- Որքա՞ն ժամանակ եղաւ ֆութպոլի այս դպրոցը բացելուն եւ ներկայիս ի՞նչ յառաջդիմութիւն կայ պատանի ֆութպոլիստներուն մօտ: Անոնք ի՞նչ ձեւով կ'ընկալեն ֆութպոլը, մանաւանդ որ տակաւին բաւական փոքր են:

ՊԱՏԱՍԽԱՆ.- Առաջին հերթին շնորհակալութիւն կ'ուզեմ յայտնել «Նաւասարդիկ»ին, որ ինծի այս հարցազրույցին առիթ տուաւ, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին անդամները եւ ի մասնաւորի ֆութպոլի համակիրները մօտէն ծանօթանան տարուած աշխատանքներուն:

Պատանի մը եթէ կ'ուզէ լաւ ձեւով հիմը դնել ֆութպոլի իր ասպարէզին, պէտք է սկսի 6 տարեկանէն, որովհետեւ այդ ձեւով անոր հիմերը ճիշդ դրուած կ'ըլլան: Մինչեւ 12 տարեկան այս պատանին գրեթէ կ'ըմբռնէ ֆութպոլ բառին իմաստը: 13էն 16 տարեկանին՝ անոր ֆիզիքականը պէտք է կազմաւորուի, որպէսզի 17էն 18 տարեկանին ան ամբողջովին պատրաստ ըլլայ իր մասնակցութիւնը բերելու պաշտօնական մրցումներու եւ դաշտներ կայանայ իբրեւ հիմնական մարզիկ:

Թերեւս այս բոլորը քանի մը տողերով ըսուեցաւ, սակայն իրականութեան մէջ անիկա երկար գործընթաց է եւ տարիներու աշխատանքի կը կարօտի. առնուազն ութ տարի ետք է, որ տարուած տքնաջան աշխատանքին պտուղը կարելի կ'ըլլայ քաղել: Ներկայիս մեզի կը մնայ հետեւողական աշխատանքով այդ պատանիներուն լաւագոյնս հոգ տանիլ, որպէսզի անոնք ճիշդը սորվին:

Մեր առաջին աշխատանքը սկսաւ անցեալ Յունիսին. ահաւասիկ երկրորդ ամիսը արդէն իսկ բոլորած ենք:

Ներկայիս մեր դպրոցին կը հետեւին 25 պատանիներ. անոնք բոլորն ալ շաբաթական հերթականութեամբ եւ ամենայն ճշդապահութեամբ կը սպասեն իրենց փորձերը: Այժմ ամէն Շաբաթ օրերը առաւօտեան ժամը 8:30էն 10:00ը տեղի կ'ունենան փորձերը: Կիրակի օրերը փորձ տեղի պիտի չունենայ, սակայն անոնք իրենց դէմ պիտի ունենան ֆութպոլի օտար խումբ մը, որպէսզի բարեկամական մրցումներու ընդմէջէն տեսականին կողքին նաեւ գետնի վրայ սորվին գործ-

նականը իրագործել:

Հ.- Սրդեօք պատանի մարզիկներուն մօտ ի՞նչ է զգացումը: Ուրախ տրամադրութեամբ կու գա՞ն փորձերու:

Պ.- Անոնք շատ մեծ խանդավառութեամբ եւ բարձր տրամադրութեամբ ներկայ կ'ըլլան փորձերուն:

Պարզ օրինակ մը տալու համար, կրնամ ըսել, որ «աշակերտներէն» մէկը իր ծնողքին կը պարտադրէ, որպէսզի զինք Այնճարէն մինչեւ Պուրճ Համուտ փորձի բերէ, որովհետեւ այնքան սէր ունի ֆութպոլին նկատմամբ:



Ըսենք նաեւ, որ ծնողներն ալ պէտք է իրենց զաւակները քաջալերեն, որպէսզի անոնք ֆութպոլի նկատմամբ տարբեր զգացում ունենան: Անոնք քաջալերանքը անպայման որ իր ազդու դերը կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի ներկայացուցչական խումբին համար, մարզիկներ պատրաստելու մէջ:

Հ.- Մինչեւ օրս, արդեօք որքա՞ն յառաջդիմութիւն արձանագրուած է անոնց մօտ: Ցարդ ի՞նչ բան կրցած են սորվիլ:

Պ.- Ընդհանուրին մասին խօսիլը բաւական դժուար է, որովհետեւ տակաւին անոնք հազիւ սկսած են ընտելանալ միջնորոտին: Սակայն կրնամ ըսել, որ 12 փորձերէ ետք, այդ պատանիները առաջին հերթին նախ սորված են ամէնէն կարեւոր կէտը՝ գնդակին վրայ իրենց հակազիւրը ունենալ եւ գնդակը հարուածել ճիշդ ուղղութեամբ, որ կենսականն է ապագային հաշուոյն:

MARZACO

USED & NEW AUTO SPARE PARTS

GARAGE MARZACO For All Kinds Of Cars,
Where Specialists & Technicians Are Always Ready To serve You
Check On Latest Scanner 2002

Address: Dora, Amanos street, Near Abou Artine gas Station
 Tel.: 01/263050 - 03/260678 - 03/291640

SUZUKI PEUGEOT TOYOTA SUBARI

Dora: Facing Mar Marjan Church, Telephone: 01 263050 - 03 292070
 Hamkash St. Behind Gallery Kitabhar - 03 415875
 E-mail: marzaco@dn.net.lb



ՄԻՔԱՅԷԼ ՇՈՒՄԱԽԵՐ՝ ՖՈՐՄԻԿԼԱ 1Ի ...

Շարունակումս՝ Ա. Էջեցի

Նիքի Լաուտա, Նելսոն Փիքեյ, Ալէն Փրոսթ եւ Այրթոն Սեննա, սակայն միշտ ալ այնպէս թուեցաւ, թէ Ֆանճիոյի մրցանիչը յաւիտեան անհասանելի պիտի մնար. բայց գերմանացի Մայքըլ Շումախըր եկաւ հակառակը փաստելու:

Արդարեւ, 2001 - 2002 եղանակի նախօրեակին բոլոր համակիրներն ալ խանդավառ էին, նկատի ունենալով, որ 2000 - 2001 եղանակը վերջ գտած էր Մայքըլ Շումախըրի 4րդ յաղթանակով եւ 5րդ ախոյեանութեան մը հաւանականութիւնը շատ մեծ էր:

Բոլոր լուսարձակներն ալ ուղղուած էին Ֆեռարի, Ուիլիըմս եւ Մաքլարըն խումբերուն վրայ: Այո՛, 11 խումբերն ալ եղանակին սկիզբը հաւասար էին եւ որեւէ ենթադրութիւն կրնար սխալ դուրս գալ, սակայն նկատի ունենալով անցեալի արդիւնքները, վերոյիշեալ երեքն էին ամէնէն շատ մեծան հոսեցնողները: Ֆեռարի կը փորձէր յաջողաբար 3րդ եղանակն ըլլալով իր վարորդներէն մէկը ախոյեանութեան տիտղոսին հասցնել. Ուիլիըմս, որ բաւական մեծան հոսեցուցած էր նախորդ եղանակին՝ շնորհիւ իր տինամիք վարորդներուն՝ Ռալֆ Շումախըրին եւ Նուան Փապլօ Մոնթոյայի, կը փորձէր աւելի եւս փաստել ինքզինքը եւ ինչու ոչ նաեւ գահընկէց ընել Ֆեռարին եւ Շումին, իսկ Մաքլարըն կը փորձէր մոռնալ անցեալ տարուան ձախող արդիւնքները եւ վերստին գրաւել պարագլուխի դիրքը, այս անգամ վստահելով՝ «Միչըլէն» անիւներու ընկերութեան:

Միւս կողմէ, մնացեալ խումբերը, այսինքն՝ Ռէնօ, Սաուպըր, Զորտըն, ՊԱՐ, Ժակուար, Արոզ, Թոյոթա եւ Մինարտի կը փորձէին իրենց լաւագոյնը տալ՝ հանդիսանալու համար տարուան անակնկալ խումբը:

Եղանակին ազդանշանը տրուեցաւ 3 Մարտին, Մելպուռնի մէջ (Աւստրալիա): Այս առաջին կրան փրիին փոլ - փոզիչընին տիրացաւ Ֆեռարիի պրագիլցի վարորդը՝ Ռուպէնս Պարիքելլօ, սակայն այս վերջինը անբախտ գտնուեցաւ եւ չկրցաւ աւարտել: Կրան փրիին, որ վերջ գտաւ Մ. Շումախըրի յաղթանակով:

Երկրորդ կրան փրիին տեղի ունեցաւ 17 Մարտին Սեփանկի մէջ (Մալեզիա): Այս հանգրուանի փոլ փոզիչընին տիրացաւ Մայքըլ Շումախըր, սակայն այս վերջինը չկրցաւ պահել իր դիրքը եւ երկու դիրք նահանջելով առիթը տուաւ, որ Ուիլիըմս խումբը իրագործէ իր առաջին տուպլէն: Արդ, այս կրան փրիին Ռալֆ Շումախըր եւ Նուան Փապլօ Մոնթոյա յաջողաբար առաջին եւ երկրորդ դիրքերը գրաւելով, յուշեցին թէ երբե՛ք դիւրին պիտի չըլլայ զիրենք գերազանցելը եւ առաւելագոյն 16 կէտերը ապահովելով պատճառ դարձան, որ Ուիլիըմս ընդհանուր դասաւորման մէջ գերազանցէ Ֆեռարին:

3րդ, 4րդ, 5րդ եւ 6րդ հանգրուանները, որոնք տեղի ունեցան յաջողաբար Ման ֆաուլոյի (Պրագիլ), Իմոլայի (Ման Մարինօ), Պարսելոնայի (Սպանիա) եւ Սփիլպըրկի (Աւստրիա) մէջ, եկան դարձեալ փաստելու, թէ Մ. Շումախըր իր փորձառութեամբ եւ տաղանդով կը մնայ ժամանակի ամէնէն վարպետ վարորդը: Այս վերջինը, որ Բ. հանգրուանը զիջած էր իր եղբոր՝ Ռալֆին, այս անգամ եղաւ անպարտելի եւ այս չորս հանգրուաններուն ալ փոտիումին բարձրագոյն պատուանդանին վրայ տօնեց իր չորս յաղթանակները: Այս հանգրուաններուն ընթացքին Ֆեռարի իրագործեց երկու տուպլէ (Իտալիա եւ

Աւստրիա): 26 Մայիսին, Մոնաքոյի մէջ տեղի ունեցաւ եղանակի 2րդ կրան փրիին: Այս կրան փրիին, եկաւ նոր էջ մը բանալու Մաքլարընի համար: Արդարեւ, Տէյվիտ Բուլթարտ, որ եղանակի ազդանշանէն ի վեր կը գտնուէր Ֆեռարիի եւ Ուիլիըմսի վարորդներուն շուքին տակ, յաջողեցաւ արձանագրել եղանակի իր առաջին յաղթանակը, գերազանցելով Շումին (2րդ) եւ Ռալֆը (5րդ), մինչ Մոնթոյա, որ այս տարուան իր 2րդ փոլ - փոզիչընին տիրացած էր, չկրցաւ օգտուիլ եւ մրցումը կիսատ ձգեց 46րդ լէփին:

Մոնաքոյէն ետք, Յունիս 9ին տեղի ունեցաւ Քանատայի կրան փրիին՝ Մոնթալի մէջ: Այս մրցումը վերջ գտաւ Շումիի յաղթանակով, իսկ Մաքլարընի վարորդները՝ Բուլթարտն ու Ռայքոնէնը ինքզինքնին վերագրած գրաւեցին յաջողաբար 2րդ եւ 4րդ դիրքերը:

Յունիս 23ին եւ Յունիս 1ին յաջողաբար տեղի ունեցան Եւրոպայի (Նիւրպըրկրինկ) եւ Բրիտանիոյ (Միլվըրսթոն) մրցումները, որոնց ընթացքին Ֆեռարի եղաւ իշխողը, իրագործելով 2 տուպլէ: Արդարեւ Պարիքելլօ, որ Աւստրիոյ կրան փրիին խումբին փափաքին ընդառաջելով առաջին դիրքը զիջած էր իմբակից՝ Շումիին, այս անգամ նոյն կացութեան չդրուեցաւ Ֆրանսացի «մարզիչ» Ժան Թոտի կողմէ: Այս վերջինը առիթը տուաւ, որ պրագիլցին գերազանցէ Մայքըլը եւ արցունքներով տօնէ իր ասպարէզին 2րդ յաղթանակը, մանաւանդ որ Աւստրիոյ արարքէն ետք, Ֆեռարի տուգանքի ենթարկուած էր, իսկ Շումի առաջին անգամ ըլլալով քննադատուած էր իր իսկ սիրահարներուն կողմէ: Բրիտանիոյ մէջ, սակայն, Շումախըր դարձեալ եկաւ արձանագրելու յաղթանակ մը եւ շատ մեծ քայլ մը առաւ դէպի 5րդ տիտղոս:

Յունիս 21ը եղաւ պատմական թուական մը Ֆորմիկա 1ի պատմութեան մէջ: Արդարեւ, Մանյի - Բուրի կրան փրիին (Ֆրանսա), երիտասարդ վարորդ Քիմի Ռայքոնէնի սխալէն օգտուելով, Շումի արձանագրեց եղանակի իր 8րդ յաղթանակը եւ իր անունը արձանագրեց Նուան Մանուէլ Ֆանճիոյի կողքին՝ իբրեւ 5 անգամ աշխարհի ախոյեան հանդիսացած երկրորդ վարորդը: Այս կրան փրիին ընթացքին, Մաքլարընի երկու վարորդները գրաւեցին 2րդ եւ 3րդ դիրքերը, իսկ Պարիքելլօ Ֆորմէյճըն լէփէն առաջ լքեց մրցումը, մինչ Մոնթոյա չկրցաւ օգտուիլ յաջողաբար կան իր 5րդ փոլ - փոզիչընէն եւ գրաւեց 4րդ դիրքը այսպիսով արտօնելով, որ Մ. Շումախըր հանդիսանայ առաջին վարորդը, որ Յունիս ամսուան ընթացքին եւ եղանակի աւարտին 6 հանգրուան մնացած կը տիրանայ ախոյեանութեան: Գերմանիոյ վարչապետը՝ Շրէտըրը ոգեւորուած՝ կիրակի օրը մասնակցեցաւ գերմանացիներուն տօնախմբութիւններուն եւ հեռագիրով մը շնորհակալեց Մայքըլը:

Մանյի - Բուրիէն ետք, տաք եւ հետաքրքրական մթնոլորտը բա-

ւական պաղեցաւ, սակայն Մոնթոյայի, Ռալֆի, Պարիքելլոյի եւ Բուլթարտի միջեւ պայքարը տակաւին սուր էր 2րդ դիրքին համար: Հոբընհայտի կրան փրիին (Գերմանիա) բոլոր վարորդներն ալ խանդավառ էին նկատի ունենալով, որ այս կրան փրիին բոլորովին նոր կերպարանք ստացած էր եւ բոլորն ալ անծանօթ էին անոր: Շարաթ օրուան փոլ - փոզիչընին տիրացաւ Մայքըլ Շումախըր եւ այսպիսով կոտրեց Մոնթոյայի թափը, որ յաջողաբար 5 անգամ տիրացած էր այս դիրքին: Կիրակի օրուան մրցումին, Շումի պահեց իր դիրքը եւ արձանագրելով եղանակի իր 9րդ յաղթանակը, հաւասարեցաւ իր իսկ հաստատած մրցանիչին, որ կը բաժնեկցի Նայճըլ Մէնսըլի հետ: Այս կրան փրիին Ուիլիըմսի վարորդները գերազանցեցին Ռուպէնսն (4րդ) ու Բուլթարտը (5րդ) եւ ընդհանուր դասաւորման մէջ գրաւեցին յաջողաբար 2րդ (Մոնթոյա) եւ 3րդ (Ռալֆ Շումախըր) դիրքերը:

Ներկայիս վարորդներն ու պատասխանատուները երկու շաբթուան արձակուրդի մէջ կը գտնուին եւ մթնոլորտը բաւական հանդարտ է, նկատի ունենալով, որ Շումի արդէն իսկ տիրացաւ ախոյեանութեան եւ փաստեց, որ կը մնայ Ֆորմիկա 1ի բոլոր ժամանակներու լաւագոյն վարորդներէն մէկը, իսկ Ֆեռարի շատ մեծ քայլ մը առաւ տիրանալու խումբերու ախոյեանութեան, իր ետին ձգելով Ուիլիըմսն ու Մաքլարընը: Յաջորդ հանգրուանը տեղի պիտի ունենայ 18 Օգոստոսին՝ Պուտափէշթի մէջ (Հունգարիա): Կը սպասուի, որ պայքարը դարձեալ սուր ըլլայ, որովհետեւ երկրորդ դիրքին համար պայքարը տակաւին վերջ չէ գտած եւ Շումի, որ ամէնէն աւելի սուղ վճարուող վարորդն է, չէ յազեցած նոր մրցանիչներ հաստատելէ...

ՆԱՐԻՆԷ ՊՈՒԼՂՈՒՐՃԵԱՆ

Peter's Brass Awards, Gifts & Signs

When you are searching for a specific thing you do not have to look in all the directions

Sumar, Motor Street, Sakhkhan Building, Beirut - Lebanon
Tel: 01 870024, Cell: 98 26574, Fax: 01 870044
E-mail: peter@brass.com, peter@brass.com
Http: www.petersbrass.com

ԼՈՒՐԵՐ՝ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԵՆ

●25 ՅՈՒԼԻՍԷՆ 4 ՕԳՈՍՏՈՍԻՆ կայացած Բրիտանական Հասարակապետութեան խաղերուն, ակտրալիական հպատակութիւն ստացած հայրենի երկու մարզիկներ հնձեցին ոսկի մետալներ:

Ծանրաբարձութեան 94 քկ. դասակարգին մէջ, Ալեքս Կարապետեան հակառակ վիրաւոր ըլլալուն, դիւրութեամբ շահեցաւ արաշէի, եփովէ ժրթի եւ ընդհանուրի ոսկի մետալները: 31ամեայ Կարապետեան կոտրեց նաեւ Հասարակապետութեան խաղերու արաշէի նախկին մրցանիշը:

Նշենք, որ Կարապետեան 1996ի Աթլանթիկ Ողիմպիականներուն ներկայացուցած է Հայաստանը, իսկ 2000ին Սիտնիի Ողիմպիականներուն հանդէս եկած է Ակտրալիոյ դրօշին ներքեւ: Ան 1995ի ծանրաբարձութեան աշխարհի փոխ ախոյեան հանդիսացած է:

●Ծանրաբարձութեան 62 քկ. կշիռքի դասակարգին մէջ, 40ամեայ Եուրիկ Սարգսեան նոյնպէս շահեցաւ 3 ոսկի մետալներ, միջազգային մրցաշարքերէ իր հնձած մետալներուն թիւը բարձրացնելով... 623ի:

Իր ասպարէզին ընթացքին համաշխարհային 23 մրցանիշ կոտրած Սարգսեան նախկին Խորհրդային Միութեան ամենէն նշանաւոր ծանրաբարձներէն մէկը կը նկատուի:

Սարգսեան եւս կը ներկայացնէր Ակտրալիան:

●«ՉԻՄՓԻԸՆՉ ԼԻԿ»ի գտումներու Ա. հանգրուանի մրցումներուն, Հայաստանի ախոյեան եւ բաժակակիր Փիւնիկ Երթի եւ դարձի մրցումներուն յաջորդաբար 4 - 0 եւ 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Ֆինլանտական Թամփերէ Եոնայթըրը եւ անցաւ Բ. հանգրուան:

Բ. հանգրուանին Փիւնիկի մրցակիցն էր Տինամօ Քիւլ: Յուլիս 31ին տեղի ունեցած երթի մրցումներուն, ուքրանական կազմը 4 - 0 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց Փիւնիկը, որ այսպիսով գրեթէ կորսնցուց Գ. հանգրուան հասնելու իր յոյսերը, բացի եթէ հրաշք մը պատահի դարձի մրցումին, Երեւանի մէջ:

●24ԱՄԵԱՅ հունգարացի Փիթըր Լեքօ Գատրակի աշխարհի ախոյեանութեան թեկնածուներու մրցաշարքը շահելով իրաւունք ստացաւ ձեռնոց նետելու աշխարհի ախոյեան Վլատիմիր Քրամնիքի:

Լեքօ, որ աւարտական մրցումին 2,5 - 1,5 արդիւնքով տապալեց պուկարացի Վեսելին Թոփալովը, այս յաջողութիւնը ամբողջութեամբ վերագրեց իր մարզիչին եւ աներօր՝ Հայաստանի Գատրակի հաւաքականի մարզիչ մեծ վարպետ Արշակ Պետրոսեանի:

Արդարեւ, Լեքօ եւ Պետրոսեան միասնաբար պատրաստած էին «Սիկիլիական Պաշտպանութեան» տարբերակ մը, որ թեկնածուներու մրցաշարքին մեծապէս նպաստած էր Լեքոյի:

●ՀԱՅԱՍՏԱՆԻ ֆութպոլի հաւաքականը Օգոստոս 17ին Ամմանի մէջ պիտի մրցի Յորդանանի ազգային խումբին հետ, իսկ չորս օր ետք՝ բարեկամական այլ հանդիպում մը պիտի ունենայ Լաթվիոյ հաւաքականին հետ:

●ՅՈՒԼԻՍԻ վերջերը, Հայաստանի ֆութպոլի ֆետերասիոնը յայտարարեց, թէ արժանթինցի Օսքար Լոփեգ նշանակուած է Հայաստանի հաւաքականի մարզիչ:

64ամեայ Լոփեգ մարզիչի լայն փորձառութիւն ձեռք ձգած է Հարաւային Ամերիկայի մէջ: 1990ին ան «Սփորթինկ» ակումբը առաջնորդած է Փերուի ախոյեանութեան, իսկ անցեալ տարի Հայաստանի ախոյեանի եւ բաժակակիրի «տուպլէ»ն նուաճած է Փիւնիկի հետ:

Լոփեգ, որ պիտի յաջորդէ Անդրանիկ Մարգարեանի, Հայաստանի հաւաքականը պիտի առաջնորդէ «Եւրօ 2004»ի գտումի մրցումներուն: Այս ծիրէն ներս, Հայաստան Սեպտեմբեր 7ին պիտի ճակատի Ուքրանիոյ հաւաքականին դէմ, ապա՝ Սպանիոյ, Յունաստանի եւ Հիւսիսային Իրլանտայի կազմերուն դէմ:

ԱՊԱԳԱՆ ՓԱՅԼՈՒՆ Է Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԵԾ ...

Շարունակուած՝ 4րդ էջէն

Սկզբնական այս հանգրուանին անոնց վրայ այդքան ալ մեծ ճնշում ճիշդ չէ բանեցնել, որովհետեւ տակաւին շատ փոքր են եւ իրենց կարողութենէն աւելին չեն կրնար տալ: Յամենայնդէպս, կը կարծեմ, որ աշխատանքը կ'ընթանայ բաւական յաջող եւ ճիշդ ուղղութեամբ եւ ապագան փայլուն է Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին համար:



Հ.- Առիթով մը խօսուած էր, թէ տեղի պիտի ունենան տարեկան քննութիւններ, սովորական դպրոցներու նման: Արդեօք առաջին քննութիւնները կատարուեցա՞ն:

Պ.- Այո՛, առաջին քննութիւնները տեղի ունեցան եւ 25 աշակերտներ ստացան իրենց համապատասխան նիշերը, ճիշդ այնպէս, ինչպէս տեղի կ'ունենայ սովորական դպրոցներու մէջ:

Եղանակի աւարտին, իւրաքանչիւր աշակերտ կը ստանայ իր կատարած աշխատանքին համապատասխան նիշը: Բաւարար նիշեր չապահովելու պարագային, ան կրնայ ձախողիլ եւ դասարանը կրկնել:

Ֆութպոլի «գաղտնիքները» սորվեցնելէն բացի, անոնց կը սորվեցնենք նաեւ ունենալ մարզական ոգի, մարզիչին, պատասխանատուներուն, խմբակիցներուն, մրցակից մարզիկներուն եւ համակիրներուն նկատմամբ ունենալ ազնիւ վերաբերմունք, կարգ - կանոն եւ մասամբ նորին. այս տուեալները «աշակերտները» Ֆութպոլիստ պատրաստելու կողքին նաեւ կը կերտեն ազնիւ եւ քաղաքավար անհատներ:

Հ.- Մարզական այս դպրոցը վճարովի՞ է:

Պ.- Ի հարկէ, որպէսզի դպրոցին ծախսերը ապահովենք: Գանձուած գումարը ամիսը 15 տուար է, ինչ որ այդքան ալ ծանր կամ անմատչելի չէ:

Իրականութեան մէջ մեր կատարածը բաւական մեծ գործ է, սակայն մենք անոր ձեռնարկած ենք սիրայօժար, առանց ակնկալութեան: Այսուհանդերձ, մեր խնդրանքն է, որ աւելի յառաջդիմելու համար, մեր ծնողները եւ ֆութպոլի յանձնախումբը օգտակար դառնան մեզի, որպէսզի այս դպրոցը աւելիով զարգանայ ու բարգաւաճի:

Հ.- Եզրափակելով, արդեօք Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի ներկայացուցչական խումբը այժմ ինչպիսի վիճակ մը կը պարզէ: Մարզիկները առօրեայ հերթականութեամբ փորձ կը կատարեն:

Պ.- Ներկայիս բաւական դժուար աշխատանք մըն է, որ կը տանինք. կ'ունենանք դժուարութիւններ, նկատի ունենալով, որ ամրան ընթացքին փորձերը դադրեցան:

Կը փորձենք խումբը օժտել նոր մարզիկներով եւ այդ ուղղութեամբ բաւական լաւ աշխատանք տարած ենք:

Սակայն շատ աւելի դժուար աշխատանք մը կը տանինք՝ տղոց սորվեցնելու պայքարի ոգին, ինչ որ վերջին տարիներուն գրեթէ ամբողջութեամբ չբացած է: Բան մը, որ անյարիր է Հ.Մ.Ը.Մ.ին: Հ.Մ.Ը.Մ.ը պայքարի միութիւն է, Հ.Մ.Ը.Մ.ականը պայքարող անհատ է:

Մեծ ճիգ կը թափենք, որպէսզի անոնց ֆիզիքական կազմաւորումը առաւելագոյնս կատարուի, որպէսզի երբ անոնք 90 վայրկեան դաշտ ներկայանան, յոգնածութեան ոչ մէկ նշան ցոյց տան, ինչ որ շատ - շատ կարեւոր է արդի ֆութպոլի հասկացողութեամբ:

Վերջապէս, ընթացիկ աշխատանքներուն զուգահեռ կը փորձենք նաեւ անոնց մօտ զարգացնել ազնիւ Հ.Մ.Ը.Մ.ականի գաղափարը, որպէսզի խումբէն ներս ստեղծուի համերաշխ միջոցառում մը եւ մարզիչ - մարզիկ յարաբերութիւնները ըլլան սերտ, մարզիկներուն միջեւ. հարցեր չպատահին: Կողք - կողքի կանգնելով պէտք է ամէն գնով Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներուն վերադարձնենք խումբին անցեալի փառքի օրերը բան մը, որ երկար տարիներէ ի վեր բացակայ է եւ սակայն որոշ ժամանակ մը կ'ենթադրէ, բայց անպայման կը հասնինք ակնկալուած թիրախին:

ԵԻՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼԻ «ՊԱՂ» ԱՄԱՌԸ

Մոնտիալին յաջորդող ժամանակաշրջանը միշտ ալ հարուստ եղած է փոխանցումներով: Այդ ամիսներուն, իրենց ազգային հաւաքականի շապիկով փայլած ֆուտպոլիստներուն փայփայած երազները յաճախ կ'իրականանան եւ անոնք կը ստորագրեն իրենց նախասիրած ակումբներէն մէկուն տոմարներուն վրայ:

Սակայն, ի տարբերութիւն նախորդ Մոնտիալներուն, 2002ի ՖիֆԱի աշխարհի բաժակի մրցումներէն ետք փոխանցումներու շուկային վրայ տիրեց յարաբերական անշարժութիւն մը: Եւրոպայի ամէնէն նշանաւոր ախոյեանութիւններու նախօրեակին, ակումբները ամուր փակած են իրենց քսակները եւ տրամադիր չեն թուիր ըլլալ Ռիսքերու դիմելու: Մէկ կողմէ իրարու վրայ կուտակուող պարտքերը, միւս կողմէ ֆութ-

պոլիստներու կատարուած վճարումներուն նուազումը ցուցանիչ է, թէ եւրոպական ֆուտպոլի ակումբները կը դիմագրաւեն տնտեսական տագնապ մը, որ համակիրները կը զրկէ իրենց խումբին մէջ նոր դէմքեր տեսնելէ:

Այսպէս, օրինակ, Իտալիոյ խումբերէն Լացիօ եւ անցեալ եղանակի աւարտին Բ. դասակարգ փոխադրուած Ֆիորենթինա յաջորդաբար 25 եւ 38 միլիոն եուրօ պարտքի մէջ են: Աւելի ուշ, Ֆիորենթինա սնանկացած հռչակուեցաւ եւ փակեց իր դռները: Իտալական ֆուտպոլի մասին նորագոյն ուսումնասիրութիւն հարցախոյզ մը բոլոր մակարդակներու վրայ նիւթական ծանր վնասներ բացայայտած է:

Նիւթական բացը մասամբ հետեւանք է ֆուտպոլիստներու կատարուած հսկայական վճարումներուն: 2000 2001 տարեշրջանին,

Փարմա իր ապահոված ընդհանուր մուտքէն 10 առ հարիւր աւելին վճարած է իր ֆուտպոլիստներուն:

Ֆրանսական ակումբներ նոյնպէս դժուարութիւններ կը դիմագրաւեն: Մարսէյ վերջին հինգ տարիներուն պարտքերու տակ կ'ըթած է: Գերմանիոյ արհեստավարժ 36 ակումբներէն պահանջուած է դրամատնային երաշխաւորագիրներ՝ հաւանական վնասները ծածկելու համար:

Անգլիական Չելսին, որ ծանօթ է իբրեւ իր ֆուտպոլիստներու համար հսկայական գումարներ ծախսող ակումբ, այս ամառ ոչ մէկ հռչակաւոր ֆուտպոլիստ «գնած» է: Չելսիի պատասխանատու Ռանիէրի այս մասին ըսած է. «Վարչութիւնը կ'ուզէ, որ կրտսերներու հետ աշխատիմ՝ հսկայական գումարներ ծախսելու փոխարէն»:

Մեկնաբաններ տիրող կացութեան պատճառներէն մէկը կը հա-

մարեն նաեւ պատկերասփիւռի կայաններէ ապահովուած մուտքին նկատաւելի նուազումը: Պորուսիա Մէօնշընկլատպախի տնօրէնը յայտարարեց. «Պատկերասփիւռի կայաններէն 2,5 միլիոն եուրօ նուազ շահապահոված ենք այս եղանակին»:

Հակառակ տիրող ընդհանուր «անշարժութեան», կարգ մը ակումբներ չեն վարանիր հսկայական գումարներ շահարկելու: Այսպէս, օրինակ, Լիծէն Մանչեսթըր Եունայթըտ Ռիօ Ֆերտինանտի փոխանցումը արժած է 46,8 միլիոն եուրօ, ինչ որ Ֆերտինանտը դարձուցած է ֆուտպոլի պատմութեան ամէնէն սուղ մարզիկներէն մէկը:

Եւրոպական ֆուտպոլը կը դիմագրաւէ վերջին տասնամեակի ամէնէն «պաղ» ամառներէն մէկը: Կը մնայ մաղթել, որ ախոյեանութիւններու ազդանշանով վերստին ջերմութիւն ներարկուի եւրոպական ֆուտպոլին...:

ՀԱՄԱՐՈՑ ԱԿՆԱՐԿ

ՖՈՐՄԻԼԱ 1Ի ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Թէեւ ինքնաշարժերու մրցումներ տեղի ունեցած են 1900ական թուականներու սկիզբէն ի վեր, սակայն Ֆորմիլա 1ի մրցումները սկսած են շատ աւելի ուշ՝ Բ. Աշխարհամարտէն ետք:

Սկզբնական շրջանին Ֆորմիլա էյ. անուանումը կրող այս մրցումներուն իրենց ուժերը կը չափէին 1500 ՇՇ. եւ 4500 ՇՇ. ինքնաշարժներ:

1950ի Ապրիլ 10ին տեղի ունեցաւ Ֆորմիլա 1 անուանումը կրող Միջազգային առաջին մրցումը՝ Փաուլի կրան փրին, զոր շահեցաւ Նուան Մանուէլ Ֆանճիօ: Ամիս մը ետք, Սիլվըրսթոն հիւրընկալեց Բրիտանիոյ կրան փրին, ուր ախոյեան հանդիսացաւ Ճիուզեփփէ Ֆարինա: 1950ի եղանակին, Ալֆա Ռոմէոյի վարորդ Ֆարինա 3 կէտով գերազանցեց Մագերաթի վարող Ֆանճիոն:

Սակայն, Ֆորմիլա 1ի մրցումներուն առաջին տասնամեակը շուտով պիտի դառնար Ֆանճիոյի մենաշնորհը: Արդարեւ, Ֆանճիօ հինգ տարբեր մակնիշի ինքնաշարժներով հինգ ախոյեանութիւններ շահեցաւ, որոնցմէ չորսը՝ յաջորդական 4 տարիներու ընթացքին (1954-1957):

Արժանթինցի Ֆանճիոյի պիտի յաջորդէին Ֆորմիլա 1ի բրիտանական խումբեր: 1962-1973 տարիներուն աշխարհի 12 ախոյեանութիւն շահող բրիտանական այս խումբերուն ի պատիւ, Ֆորմիլա 1ի պատմութեան այս հանգրուանը պիտի կոչուէր «Բրիտանական ժամանակաշրջան»: Այս ժամանակաշրջանի վարորդներէն յիշենք սկզբնականներ Ճիմ Քլարք եւ Ճէքի Սթիուարթ, աւստրալիացի Ճէք Պրէպլան, անգլիացի Կրէյգ Զիլ (Տամոն Հիլի հայրը) եւ նոր գելանտացի Տէնի Հիլմ:

1970ական եւ 1980ական տարիներուն, Ֆորմիլա 1ի ինքնաշարժներու արհեստագիտական զարգացումը հսկայական վերելք արձանագրեց, որուն իբրեւ արդիւնք ինքնաշարժներու կառոյցը ամբողջական ձեւափոխումի ենթարկուեցաւ: Այս տարիներուն փայլող անունները եղան էմըրսըն Ֆիթիփալտի, Նիքի Լաուտա, Ճէյմս Հանթ, Ժիլ Վիլնէօվ եւ Ալէն Փրոսթ, որ ախոյեան հանդիսացաւ 1985, 1986, 1989 եւ 1993 տարիներուն: Ֆրանսացի Փրոսթ, որուն մայրը հայ է, մինչեւ օրս կը նկատուի ամէնէն հմուտ եւ խելացի վարորդը, նոյնիսկ անզուգական Շումախըրի կարծիքով:

1980ականներու վերջին տարիներէն մինչեւ իր եղբրական մահը (1994), պրագիլցի Այրթոն Սեննա պիտի փոթորկէր Ֆորմիլա 1ի աշխարհը: 1988, 1990, 1991 տարիներու Ֆորմիլա 1ի ախոյեան հանդիսացած Սեննա, որ ծանօթ էր յաճախ իր կեանքը վտանգելու գնով նուաճումներ արձանագրելու մղումով, մահացաւ իմուլայի կրան փրիի (Իտալիա) ընթացքին, ինքնաշարժի արկածի մը պատճառով:

Սեննայի մահն ու նոյն տարեշրջանին պատահած շարք մը այլ վտանգաւոր արկածներ, «Էֆ.Ա.Եյ.»ը (Ֆորմիլա 1ի միջազգային ֆետերասիոն) մղեցին դիմելու վարորդներու կեանքը առաւել ապահով դարձնող շարք մը փոփոխութիւններու:

Առ այդ, առաւելագոյն արագութեամբ ընթացող Ֆորմիլա 1ի ինքնաշարժները թէեւ որոշ չափով զիջեցան իրենց արագութեան, սակայն դարձան համեմատաբար աւելի ապահով:

Սեննայի մահէն ետք, Ֆորմիլա 1ի աշխարհի յաջորդ կուռքը պիտի ըլլար Մայքըլ Շումախըրը: Ֆեռարիի գերմանացի վարորդը աշխարհի ախոյեանութիւնը շահած է հինգ անգամ եւ ցարդ տեղի տալու ոչ մէկ ազդանշան կու տայ, ընդհակառակն՝ կը փորձէ կոտրել Ֆանճիոյի մրցանիշը...

STEVE SPORT
All Kinds Of Sporting Goods
& Casual Wear
NIKE adidas

BOURJ HAMMOUD CELL. 03/667687
ՊՈՒՐՃ ԶԱՍՈՒՏ ՍԻՆԷ ՍԱՆԹՐԱԼԻ ԴԻՍԱՅ ԶԵՌ: 03/667687

Յաջորդ թիւով՝
Թեմիսի պատմութիւնը



ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼԵՆՍ ԱՐՄԱԹՐՈՆԿ ԿԵ ՉԱՆԱՅ ԻՐ ԱՆՈՒՆԸ ՈՍԿԻ ՏԱՌԵՐՈՎ ԱՐՉԱՆԱԳՐԵԼՈՒ ԲՈԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՀՍԿԱՆԵՐՈՒ ԿՈՂՔԻՆ

Եթէ իրաւամբ ֆուլթպոլը ընդունուած է իբրեւ մարզաշխարհի թագաւորը, ապա հեծելարշաւը ընդունուած է իբրեւ թագուհին: Միաժամանակ ֆիզիքական ուժ, կորով, թեքնիք, խելք ենթադրող այս մարզաձեւը Եւրոպայի եւ յատկապէս Ֆրանսայի մէջ կը վայելէ մեծ ժողովրդականութիւն: Օրինակ մը տալու համար նշենք, որ այս տարի, Ֆրանսայի շրջավազքի 23 հանգըրուաններուն ընթացքին մրցումներուն հետեւող ժողովուրդին թիւը անցած է երեք միլիոնը, մինչ պատկերասփիւռի կայաններէն Ֆրանսայի մէջ հետեւած են աւելի քան 25 միլիոն մարզասէրներ, իսկ աշխարհի տարածքին՝ շուրջ 200 միլիոն:

Հեծելարշաւի Մոնտիալը կը նկատուի անշուշտ Ֆրանսայի շրջավազքը: Անիկա հեծելարշաւի մեծագոյն իրադարձութիւնն է, որուն կը յաջորդեն Իտալիոյ եւ Սպանիոյ շրջավազքերը, ինչպէս նաեւ քանի մը աւանդական մրցումներ՝ Ֆրանսայի, Իտալիոյ, Պելճիքայի եւ Լիւքսամպուրկի մէջ եւ անշուշտ աշխարհի ճամբու ախոյեանութիւնը:

Ֆրանսայի շրջավազքի պատմութեան մէջ ցարդ չորս հսկաներ՝ Ֆրանսացիներ Պեռնար Հինօ եւ Ժաք Անքեթիլ, պելճիքացի էտի Մերքս եւ սպանացի Միկէլ Ինտուրայն յաջողած են հինգական անգամ արժանանալ տիտղոսին:

Ներկայիս, անոնց ճամբուն վրայ կը գտնուի ամերիկացի Լէնս Արմսթրոնկ, որ այս տարի շահեցաւ չորրորդ տիտղոսը եւ կը պատրաստուի յառաջիկայ տարի դարձեալ բարձրացընելու բաժակը եւ իր անունը ոսկի տառերով արձանագրելու վերոյիշեալ հսկաներու շարքին:

Անկախ բացառիկ հեծելանկորդ մը ըլլալէ, եւ թեքնիքը առումով բազմակողմանի առաւելութիւններ ունենալէ, Արմսթրոնկ երկու տուեալ եւս ունի իբրեւ մեծ յիշատակութեան արժանի հեծելանկորդ: Առաջին՝ ամերիկացի ըլլալու երեւոյթը: Ան առաջին ամերիկացին է, որ մաս կը կազմէ մեծերու փաղանգին: Հեծելարշաւի պատմութեան եւ մանաւանդ Ֆրանսայի շրջավազքի պատմութեան մէջ ամերիկացիք նախապէս միշտ ալ շուքի մէջ մնացած են: Ֆրանսա, Պելճիքա, Իտալիա, Հոլանտա եւ պարագայաբար եւրոպական քանի մը այլ երկիրներ տիրապետած են այս մարզին: Ամերիկացիներուն անունն անգամ չէ յիշուած մինչեւ ութսունական թուականներ, մինչեւ որ կրէկ Լեմընտ (որ սպաննուեցաւ որսորդութեան ատեն) եկաւ եւ իր երկրին անունը արձանագրեց՝ երկու անգամ շահելով Ֆրանսայի շրջավազքի տիտղոսը, իսկ հիմա Արմսթրոնկ եկաւ Միացեալ Նահանգներու անունը հանգիստ տեղաւորելու մեծերու շարքին:

Երկրորդ՝ Արմսթրոնկի ֆիզիքական հրաշքը: Երկու անգամ Ֆրանսայի շրջավազքը շահելէ ետք, յանկարծ բոթ մը. ան կը տառապի արեան քաղցկեղէ:

Մարզաշխարհը եւ յատկապէս հեծելարշա-



ւի շրջանակները տակնուվրայ եղած են: Ապագայ խոստացող մեծ մարզիկ մը կը խամրի: Լրատուամիջոցները, բանաւոր թէ գրաւոր մամուլը անվերջանալի լուրերով կ'արձագանգեն այս տխուր վիճակին: Տարի մը հեռու մնալէ ետք մարզաշխարհէն, այս անգամ ցնցիչ այլ լուր մը. Արմսթրոնկ սկսած է ապաքինիլ եւ յաղթահարել հիւանդութեան: Ցնծութիւն ամէնուրեք: Եւ իրաւամբ, ան ոչ միայն կ'ապաքինի, այլեւ կը վերադառնայ իր հեծիկին եւ նոյն տարին իսկ կը հանդիսանայ ախոյեան: Հրաշք, անկոտորում կամք, բախտ, ինչ կ'ուզէք ըսէ՞ք, կարեւորը մէկ բան յստակ է ու մեկին. Արմսթրոնկ ներկայ է՝ իր յաղթական երթով եւ քշելու անզուգական ոճով: Վերջին տարիներուն ան միանգամընդմիշտ փաստած է, որ կը մնայ հեծելարշաւի աշխարհի ներկայ թագաւորը, յատկապէս զառիվեր մագլցելու իր բացառիկ ուժով եւ թեքնիքով: Ալպեան եւ Փիրէնեան լեռներուն մէջ, Ֆրանսայի շրջավազքի գլխաւոր հանգըրուանները, ուր կ'որոշուին տիտղոսակիրներուն ճակատագիրները, Արմսթրոնկ կը դառնայ մրցակիցներուն պատուհասը, յստակօրէն կը գերազանցէ զանոնք ու առանձինն «կը թռչի», «կը սաւառնի» ցից զառիվերներուն վրայ, քշելու այնպիսի ոճով մը, որ կը հմայէ մարզասէրները. ան ոտքի կանգնած իր հեծանիւին վրայ, ամենայն արագութեամբ կ'անջատուի խմբակիցներէն ու մրցակիցներէն, որոնք կարողութիւնն ու ուժը չեն ունենար հալածելու զինք, եւ ան «գլուխը կ'առնէ ու կ'երթայ», յաճախ կոտորելով ինքն իր հաստատած արագութեան մրցանիշները...

Պատկերը նոյնն էր այս տարի եւս: Ան ամենայն հանգստու-

թեամբ աւարտեց շրջավազքը եւ փառաւոր շուքով մուտք գործեց Փարիզի հռչակաւոր Շան զ'էլիզէի պողոտան, դեղին շապիկը միշտ պահելով իր վրայ եւ տանելով վերջնական յաղթանակը:

Մինչեւ յաջորդ Յուլիս, ամբողջ մէկ տարի, Արմսթրոնկ, որ ամուսնացած է Ֆրանսուհի մը հետ եւ կը բնակի Ֆրանսա, վստահաբար տքնաջան փորձեր պիտի կատարէ հինգերորդ տիտղոսին տիրանալու համար: Անոր մեծ երազն է անշուշտ իր անունը արձանագրել հսկաներու շարքին, առ այդ ան ոչինչ պիտի խնայէ անոր համար: Եթէ արկած մը կամ անակնկալ մը չպատահի եւ Արմսթրոնկ յառաջիկայ տարի իր մասնակցութիւնը բերէ շրջավազքին, շատ հաւանաբար յաջողի իրականացնել իր երազը, որովհետեւ այսօրուան իրավիճակով՝ ոչ մէկ հեծելանկորդ ունի կարողութիւնը կասեցնելու զինք կամ մարտահրաւէր կարողալու իրեն, բացի անշուշտ եթէ նոր «հրաշք մանուկ» մը ծնի հեծելարշաւի աշխարհին մէջ...

SALON MANO

For Men & Kids

The right choice...

Bourj Hamoud
Municipality Street
Center Arine, 1st Fl.
Tel.: 01/262181